

ՄԵԼԻՏԱ ԸՊՇԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ, ՀՅՈՒՐՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆՅՈՒՑ-
ՊԵՏՈՒՄՈՒՆՔՆԵՐ

Կախիջևանցիք չ'սալետվ, որ դարեր են անցել այն օրից,
երբ հեռացել են իւրեանց մայր հայրենիքից, բաժանուել,
կտրուել են իւրեանց հայրենակիցներից և ստիպուած են եղել
ապրել առանձնացած, օտարների մէջ և միշտ-հանապաղ են-
թարկուել են օտարների սովորութիւններին, վարք ու բար-
քին, այնուամենայնիւ դեռ պահպանել են իւրեանց մէջ շատ
ծէսեր, ոնտոփապաշտութիւններ, հաւատալիքներ ու նախապա-
շարմունքներ, որոնք յար և նման են բռն հայրենիքում ապ-
րող հայերի մէջ պահպանուածներին: Կոքտ մինչեւ անդամ
պահպանել են նոյն աշխարհահայցողութիւնը կետնքի գանա-
գան երեւողթների մասին և շարունակել են իւրեանց առօրեայ
կեանքում ևս զեկալիարտել նոյն սկզբունքներով, նոյն գաղա-
փարներով, նոյն նպատակներով, որոնք ընդհանուր են բռվան-
դակ հայութեան:

Երկուշարթի օրը մի նոր բան չ'պէտք է բռնել, ճանա-
պարհի չ'պէտք է գուրս դալ, որովհետև ծանր օր է, բռնած
դործդ չ'լի յաջողիլ, ճանապարհարդութիւնդ վտանգաւոր կ'լինի:

Երկուշարթին բարի օր է, բայց այդ օրը լուսոցք անելը
լու չ'է, որովհետև այդ օրուայ լուսցած շապիկդ ռարտի մաշուց-
քով է կադուուն:

Զորեցարթին բարի չ'է, որովհետև այդ օրը ամեն կա-
խարդութիւն յաջողում է:

Հինգշարթին բարի օր է. այդ օրուայ բռնած բոլոր գոր-
ծերը յաջողութեամբ կ'վերջանան:

Ուրբաթը չ'գէշ է», որովհետև Քրիստոսի չարչարանքի օրն է:
Ճարաթ օրը նոր գործ պէտք չ'է սկսել, որովհետև երկար
կ'քաշի. այդ օրը երեկոյան էլ մածուն չ'պէտք է դնել, որով-
հետև կ'շաղուի:

Նահանջ տարին ամուսնայը լաւ չէ, որովհետեւ ամուսնութիւնը բաղդաւոր չի լինիլ, ամուսնները ուրով չեն ապրիլ միմեանց հետ, ամուսններից մէկը կ'մեռնի:

Մարտ ամսին, կամ, ինչպէս զիւղացիք առում են, ռ.Քիւցուկը ամսին բան չի կարելի կտրել, ոչիսար և առհասարակ անսասուն չի կարելի մորթել, ուստի և պէտք է, իրեւ նշան, արդ ամսի ընթացքում շարունակ դռների շէմքի մի անկիւնում մի «չափալ» — պատառաքաղ տնկել, որ մտնող-գործ եկողները տեսնեն ու զգոյշ լինին:

«Մըջինքին» — Միջինքին բան անել չի կարելի, որովհետեւ ամուսի կ'կրծէ — լրկան տօն է:

Ս. Կէորդի երկուշարթին (Ապ. 23) «Քաշոցք» է, արսինքն ով որ արդ օրը «բան բանէ», ձեռքն ու ոտքը կ'քաշուեն: Հինունքի ամեն հինգշարթի բան չի կարելի բանել, որովհետեւ «կայծակը կ'զարնէ» — կարծակի տօն է:

Հինունքի ամեն երեկոյ, արևը մայր մտնելուց յետոյ, բան բանել չի կորելի, որովհետեւ հաւկուր կ'լինես:

Կիւրակի օրերը թէ ալիւր մաղես, սիրական՝ որդուդ կը թաղես:

Որ կինն որ երեքշարթի օրը շապիկը փոխէ, «էրիկը», — մարդը կ'մեռնի:

Ընձևեստ, ցեխ ձմեռը վիճակար է դաշտերին ու ճանապարհներին. պէտք է տան անդրանկին դարնել տալ «ոռփաններին» — Հնոցներին, որ ցուրտ լինի, ձիւն դայ, որ արտերը, դաշտերը ծածկուեն ու ճանապարհները ամրանան:

«Ֆառվատրուկից» — Ֆարվագարդից պահուած օրհնած ուռը պէտք է խաչաձև միմեանց վերայ գնելով համբուրել, ձգել կրակը, ալբել, որ քամին դադարի, վորթորին ու մրրիկը հանգստանան:

«Սատանայի հարսնքին» — օդապտուտի մէջ ովէտք է մի դմելին ձգել, որ չար քամին բարձրացնող սաստանայի մատը կտրուի ու օդապտուտը հանգստանայ:

Մեռեալ բուղարկաւորելու ժամանակ ով չ'վեր կենայ տեղից, չ'կանգնի, «մեռելիսին» կ'լինի, ուստի և ննջեցեալ տա-

նելու ժամանակ պէտք է քնածներին զարթեցնել, մինչև անգամ երեխաների օրորոշներն էլ պէտք է վերցնել, բարձր տեղ դնել:

կանանց երկունքի ժամանակ պէտք է սենհակում գըտնուած բոլոր փակուած տեղերն ու առարջկաները՝ դռները, պահարանները, արկղները, գգրոցները բանալ, որ երեխալ բերելը հեշտ լինի, երկունքի ցաւը թեթև լինի:

Տղոյկանի վերալ պէտք է «ջէնկի թուր» — պատերազմի ուուր դնել, որ թեթև բերէ, կամ նոյն նպատակով նոյն սրի վերալ ջուր ածել ու ջուրը խմեցնել տղոյկանին:

»Ալրաստին կամ «Ճովին մարտ տեսնող մարդկանց թուրը կամ զօտին պէտք է դնել տղոյկանի վերալ, որ երեխան շուտ ու թեթև աշխարհ գալի:

«Բակուն» — բուն որ տան վերալ որ նստի ու բուալ, նշան է, թէ այն տանից մարդ պիտի մեռնի:

Եթէ բուի սիրտն ու աջ ոտքն առնես, քնած մարդու վերալ դնես, խօսին նա կ'ոկուի իւր արած բաները պատմել:

Եթէ բուի սիրտն ու ոտքը թևերիդ տակը պահես, շները չեն հաջիլ վերադ:

Նոր լուսին տեսնողը պէտք է մաղերի ծայրից մկրատով մի փոքր կտրէ, որ մազը աճի:

Կարճ մազ տնեցողի մազը կաճի, եթէ նա բաղնիքի ժամանակ երկար մազ տնեցողի մազից ծավուող ջրից երեք ափ առնէ ու խմէ:

Եթէ երեք շաբաթ օր իրար վերալ, արևը դեռ չ'ծագւծ, մազերիսդ ծայրից մի փոքր կտրես, մազերդ շատ կ'երկարեն:

«Մազերկան» կեր, որ մազդ երկարի:

Կանալք եթէ չեն ուզում, որ նոյս մազերը թափեն, տըզամարդու գլխարկ չպէտք է ծածկեն:

Խուզած մազդ պէտք է կրակի մէջ ձգես, թէ չէ զլխացաւ կունենաս:

Մազը աղբի հետ դուրս չ'պէտք է ձգել, որովհետև աղբի մէջ քուջուջ անող թռչունի ոտքին կարող է փաթաթ աթուել, թռչունն էլ կանիծէ մազի տիրոջը ու նորա զլխի ցաւը անպակաս կ'լինի:

Մաղ կուլ տուտղի փորի մէջ մաղը օձ կ'դառնայ:
Եթէ հիւանդ կնոջ մազերը դարնան ոկրքին արդաւանդ
հողի մէջ թաղես, արդ մազերը արեղակի տաքութիւնից օձ
կ'դառնան:

Թեղին մաղը վատ բնութեան նշան է:

Բարեկամիդ տանը մազերդ խուզիր, չարակամիդ տանը
եղունդդ կտրիբ:

Եղունդ կրծողը բարակացաւ կ'ստանայ:

Եղնզի վերայ կոխող-անցնող աղջկալ բաղդը եօթ տարի
կ'փակուր:

Կարած եղունդը պէտք է պատի տակը թաղել:

Եղնզի վերայ ճնորեկ ունենալը նոր հագուստ հազ-
նելու նշան է:

Եղունդ արելը լաւ չէ, որովհետեւ եղունդ այրող մարդու
եղունդերը այն աշխարհում կ'պահանջնեն, ու թէ որ չ'գտնուի,
եղնզի տիրոջը կայրեն:

Որ մարդու եղունդն որ մօին մօտիկ կպած լինի, նորա
ազգականների սէրը նորա վերայ շատ կ'լինի:

Թրան շէմքի վերայ կանգնած միմեանց ձեռք տալը-բա-
րեւելը լաւ չէ, որովհետեւ բարեկամները միմեանց կ'թշնամա-
նան, կ'խոռոչն միմեանցից:

Ազքի պազելը ճանապարհ է ցոյց տալիս, գհեռաւոր»
դալու նշան է:

Կերակրի սեղանի վերալից բան ընկնելը, կոտրուելը, թա-
փուելը հիւր դալու նշան է:

Առաջին անգամ երբ ամպի որոտումն լսես, պէտք է մի
քար առնես ձեռքդ ու երեք անդամ մէջքիդ դարնես, որ մէջ-
քըդ ամրանար:

Նոր լուսին տեսնողը եթէ մի երկաթի կտոր զնէ՝ ատամ-
ների տակ, ատամները կամրանան, և ալլն և ալլն:

Տղոցկանին, երեխաններին և առհասարակ ամեն մի լա-
րան, մինչև իսկ խմորեղէնը պէտք է պահպանել չար աչքից,
թէ չէ կարող են «նազար դնել» - աչքով տալ: Չար աչքից,
կամ ինչպէս ատում են, ոչար նազարից բռնուածներին կա-

բելի է զանագան աղօթքներով աղատել, բժշկել, աչքի դօրութիւնը նոյս վերապից հանել:

Տղայիանին չար աչքից բժշկելու համար պէտք է այսպէս աղօթել.

Տուն ունիմ երկամի է,

Պատերը ամենը կրպակէ,

Սուրբ կուտօն մէջը քառն է,

Սուրբ Գրիգորով գարթուն է:

Երեք-երեք պոյ ձիաւոր,

Երեքն ալ կանանց կապաւոր՝ —

Մէկը Ցիսուս, մէկը Քրիստոս,

մէկը մեր Տէրը:

Ալլանք բարձր սարերով,

Խջանք խոր-խոր ձորերով,

Հարկւր հազար հրեշտակով,

Առջի Տէր, ուր կերթաս.

Երթամ դուռը հըւըն դին,

Կըլմ էրդիկը տղացիանին,

Բայնիք մզիմ վիրապաշտին.

Սուրբ ունիմ, սուրբ գօտի ունիմ,

Սուրբ գօտի կապած ունիմ:

Պօղոս, Պետրոս, Անդիանոս,

Դմրեղմանին Տէրն Ցիսուս

հայր Յովանէփ, կոչս Մարիամ,

Քուն եղաւ, երազ տեսաւ,

Բերդէ քաղաք ընծայեցաւ,

և խանձարուրս պատեցաւ :

Միւս աչքով տուածներին պէտք է հետևեալ կերպով աղօթել:

Աղօթիմ ութը մասով,

Դուստրը կերաւ, պատեցաւ :

Հստուածամօր քաղցր կաթով,

Ո՛վ Մարիամ, բնչ կանիս,

Կոդմացին, Դամիանոսին,

Հիւանդ իմ ու ճար ըունիմ.

Հնարժամի բժշկին բժշկարանով,

Առ սեակոթ դանակը,

Սկ օքը կթեցին,

Մտիր Ծգամայ դրախտը,

Առանց մակարդ մակարդ եցին,

Կորի իմ սիրելի (այս ինչ անուն)

Մարը կերաւ, ճաթ եցաւ,

Չար աչքը, չար փուշը, չոր խոս-

տուլիլ:

Չար աչքից ախտացածներին կարելի է աղատել հետևեալ աղօթքով.

Աղօթիմ, կաթն է կուսին,

Կրօնին, ծերօնին —

Գաււագանն է Մովսիսին,

Առէք երկու բերան դանակը,

Քնարը Դամիլին,

Կորէք չար աչքը, չար փուշը,

Մատն է Սոլոմոն,

Չար խոստուկը, չար նազարը

Ջեռն է Ցէսուսի Քրիստոսին,

(Այս ինչ անուն) Ճառացին:

Կախիջեանցիք, բացի տղոցիսնի հիւանդութիւններից, շատ ուրիշ ցաւեր էլ բուժում և ն զանազան աղօթքներով,

որովհետև կարծում են, թէ հիւանդութիւնների մեծ ժամանակաշ է զալիս պէս-պէս չար պատահմունքներից, չար աչքերից, վախից: Գլխացաւը, ատամնացաւը, մարմնի զանազան մասերում պատահած ծակոցքները - «իսոտուկը», փաթաղի - «գալախի» հիւանդութիւնները, մէջքացաւը, պրոտացաւը - «կռնան», զազտուկ ջերմը, գրաբունուկը, «դիմբեկին» - մկնատամբ, մինչև իոկ կարճի, օձի և ազդի-ազդի թունաւոր միջատների խայթուածքը բոլորը, բոլորը ունին իւրեանց ազօթքները: Եւ այդ ազօթքները հասարակ բաներ չեն, այլ «որբունակ» են, այսինքն սուրբ ազօթքների զօրութիւն ունին:

Մկնատամբ - «դիմբեկին» բժշկելու համար, օրինակի համար, ասում են հետևեալ «ազօթքանման աստցուածքը».

Թրջունը սարան կանչը.

Քրիստոս եկաւ, վրան նայեցաւ, զարմացաւ.

Թիւֆ, թիւֆ, թքեց վրան, ըրոցաւ.

«Կռնան» կամ պրոտացաւն ազօթում են այսպէս.

Քրիստոս մեր դուռը դէմ առաւ, Այն ողորմելի էրկանը

Քարը բարձ արաւ, Ողորմելի կնկանը

Հողը դօշակ արաւ, Առ թոնդերէն ծաղեկը,

Թթու մածուն, գարի հաց, Կորէ՛ (այս ինչ անուն մարդու):

Խոռ դդալ, խոռ պնակ մէջը բրոշ: Չար աչքը, չար փուշը, չար կռնան¹⁾:

Բացի ազօթքներից, նախիջևանցի պառաւները զանազան հիւանդութիւններ, տկարութիւններ ու ցաւեր բժշկել ու բժշկում են, կամ ինչպէս ինքեանք ասում են, «ճար են անում» զանազան «ճարերով», որոնց բոլորի հիմքը ևս կազմում են պէս-պէս սնոտիապաշտութիւններ, նախապաշտունքներ և հաւատալիքներ:

Հաւկուր եղածների աչքերը, օրինակի համար, չղջիկի արիւն են կաթեցնում, երևի, հիմնուելով այն հանգամանքն վերալ, որ չղջիկները միայն զիշերն են լոյս տեսնում:

¹⁾ Եյս ազօթքների օրինակներն իւր ծերունի մօր բերանից առնելով, հաղորդել է մեզ Տէր. Գէորգ. Գէլլէշահինեանը:

Մեռելիոխ եղածներին տանում են գերեզմանոց, կանգնեցնում են այն մեռեալի գերեզմանի վերայ, որից կարծում են, թէ մեռելիոխ է եղել հիւանդը, և ոտքերին ու ձեռքերին ջուր են ածում, այնպէս լարմարացնելով կամ կանգնեցնելով, որ հիւանդի ոտքերը մեռեալի ոտքերի, ձեռքերն էլ ձեռքերի տեղը գտն:

Մեռելիոխ լինում են կամ մեռեալից վախենալով, կամ մեռեալ յուղարկաւրբելու ժամանակ չ'կերպենալով, որոյից չ'կանգնելով և կամ թազման ժամանակ շատ լաց լինելուց ու տանջուելուց: Մեռելիոխ լինելու առաջն առնելու համար, երբ որ տեսնում են, որ մէկը շատ է լաց լինում, չարչարութւմ ու տանջուում, առնում են գերեզմանի հողից մի բռուր հող ու լցնում են սուր անողի կռնակն օձիքի տակից: Մեռելիոխներին բժշկում են և «Քցելանքով»՝ «Քցելանքը» մի սնոտիւապաշտական դարման կամ ճար է, որ պատրաստում են և գործ են դնում երեք տեսակ: Կամ հիւանդի ստքն ու ձեռքը լուսում են, յետոյ լուացքաշրի մէջ ձգում են կորեկ ու շաքար, հիւանդին թքել են տալիս ջրի մէջը, մաղերը կտրում, ձգում են ջուրը, ջրամանի վերայ փառում են հիւանդի մի նշանից (շորից), գիշերը դնում են լուսնի տակ և առաւտսեան արդ բոլորը տանում, թափում են «խաչ-ճամբարի» վերայ. կամ հիւանդի ոտքն ու ձեռքը լուանում են և թափում են խաչ ճանապարհի վերայ, յետոյ շինում են մի պանուճապատանք—«խումաշիկ», աւնում են հիւանդի շորից մի անպէտք կտոր ու մէջը դնում են կօրեկ, սոխ, եօթ տեսակ միրդ, տալիս են հիւանդին շաքար, որ նա երեք անգամ խածնէ ու թքէ և ապա զիշերը արդ բոլորը դնելով հիւանդի անկողնի տակ, երկրորդ զիշերը տանում են, ձգում են խաչ-ճանապարհի վերայ, կամ առնում են եօթ տեսակ անուշեղէն (միրդ), մի սոխ, մի կտոր շաքար, մի քանի փոքրիկ «խումաշիկներ» և այս բոլորը կապիլով փոքրիկ կապոցիկների մէջ, մի մաղի մէջ են լցնում և դնում հիւանդի բարձի տակ, որ մնայ ամրող զիշերը: Միւս օրն առնում են մաղը և անխօս տանում, թափում են նորա պարունակութիւնը խաչ-ճանապարհի վերայ ու անխօս վերադառնում տուն: Հիւանդի այն հարցին, թէ «լինչ

բերիր», պատասխանում են. «թեթևալութիւն ու տռաղջութիւն»: «Քցելանքը», որ, ինչպէս երևում է, առաջ է եկել ձգել-քցել բառից, որովհետև նա ձգուում կամ թափուում է նանապարհի վերալ, գործ է ածուում և «Հանդէպքի» դէմ: «Հանդէպք» ասելով, նախիջևանցիք հասկանում են ամեն մի հիւանդութիւն, որ առաջ եկած են համարում չար պատահմունքից-Հանդիպքուց, սաստիկ վախենալուց, սաստիկ ամաշելուց — չառ առնելուց», և այն և այն:

Որպէսզի իմանան, թէ «Հանդէպքը» ընչից է առաջ եկել և կարողանան թեթևացնել ու բժշկել նորան, նախիջևանցիք սովորաբար օթեթեւ են թափում: Նոքա նախապէս հարց ու փորձ անելով և իմանալով, թէ հիւանդի որ տեղն է ցաւում, մի ջրով լիքն ամօն են բռնում ցաւած տեղի վերայ ու հալում, թափում են նորա մէջ կամ արճիճ կամ մեղրամոմ: Այսուհետև նոքա քննում են ջուրը և արճճի կամ մերամոմի ջրի մէջ ստացած զանազան ձևերից գուշակում են, թէ հանդէպը առաջ է եկել, պատահել է այս ինչ առարկալից, կամ այս ինչ դէպքից: Թէ ընչից է առաջ եկել «Հանդէպքը» —, իմանում են և դիւթիւններ կամ հմարութիւններ անելով — «Փայ բանալով»: Հմայում են սովորաբար կամ խաղաթղթերով, կամ տէրողորմեալով և կամ, որ շատ ընդունուած է, բակլայ կամ 30 կամ 41: Բակլանների մէջ խառնում են հացի կտոր, ձգելով, կամ, ինչպէս ասում են, բակլայ բանալով: Բակլայ նետով դիւթերի — «Փալչինների» բակլանների թիւը լինում է ազի կտոր և մի փայտուն քար կամ ապակու կտրի: Բակլանները երկու ափով իրար լաւ խառնելուց յետով, դիւթերը փըռում են նոցա զետնի կամ սեղանի վերայ և նոցա շարուածքից, միմեանցից հեռու կամ մօտ լինելուց զանազան գուշակութիւններ են անում:

Նախիջևանի հին մարդկանց և տիրապէս զիւղացւոց կրւակայութիւնն էլ լցուած ու պաշարուած է զանազան զերբնական արարածներով ու հողիններով՝ «խոնջոլողներով», «մեղմէնաղէկներով», «բոլոջներով», «ժիվուններով», «ծովին-մարերով», «Ըռայիմ-թառալիմներով», «մանդրիներով» և ազգի-ազգի

«խորիթ լախներով», «ջիներով», սատանաներով ու գլեկրով և նախիշեանցւոց նրկակալութեամբ այդ արարածները միշտ ներկայ են, միշտ խառնուում են մարդկանց գործերին, միշտ աշխատում են պէս-պէս փորձանքներ ըերել մարդկանց զլիին, ուստի և պէտք է հանապաղ զգոյշ լինել նոցանից, ընկած տեղը միշտ աղօթքներ առելով ու չորս կողմը խաչակնքելով:

Խոնջողոգներն ապրում են տների չարդախներում — «թաւաններում», մէջմէն աղէկները — քանդուած տներում, ամայի բնակարաններում, բողոջները — տների մէջ գտնուած գոյ տեղերում, մութ անկիւններում, պատերի ճեղքերում, ծովի-մարերը — ջրերում, մանդրները — լեռներում, անտառներում, խորթ-լախները — գերեզմանոցներում, իսկ միւսներն ամեն տեղ:

Խոնջողոգները սովորաբար երևում են նոր-տարու գիշերը. նոքա հազած են լինում փսխաթէ պատռուուն հալաւներ, որոնց ցնցոտիներից ու ծուէններից երկաթէ գունտեր են կախուած լինում. նոքա, երբ յաջողում է նոցա մէկին բռնել, նստում են նորա վերայ և ճնշում իւրեանց ծանրութեան տակի փրփաններն անիւ. են դառնում ու վազում մարդկանց յետևից: Խորթլախները մեռեալների ուրուականներն են, որոնք յաճախակի երևում են մարդկանց ու սարսափահար անում նոցա: Առարիմ-թառայիմները նոյնայէս երևում են նոր-տարու գիշերը, մտնելով տները հնոցների ծինելոյցներից և դուրս գալով վառարանի դռնից. նոքա երկար երկաթէ մագիլներ ունին, սպիտակալեր են և մօրուեղ: Մոսիթ-մարերն երկարամազ կանանց նման են. նոցա ոյթը նոցա մազերի մէջ է: Եթէ նոցա մազերը կտրես, նոքա քեզ գերի կ'լինին և զանազան ծառալութիւններ կանեն: Մեզմէնաղէկների կրունկները «թեռս» են — ընդհակառակն են. նոքա զիշերները լուսաւորում են իւրեանց բնակարանները, «խաղ են կանչում» — երգում են, պարում են և ամբողջ գիշերը խաղ ու հարսանիքի մէջ են անցկացնում: Եթէ նոցա յաջողում է մէկին բռնել, նոքա նորան էլ տանում են իւրեանց բնակարանները, նոքա էլ ստիպում են իւրեանց հետ պարել, և այնքան չարչարում ու տանջում են, որ բռնուածը համարեա թէ ուշաթափուում ու նուազում է:

Այն ժամանակ նոքա դուրս են հանում նորան, տանում են մի անծանօթ տեղ և արձակում։ Մանդրները կամ մանդր-մարդիկը անճոռնի թշուկներ են, որոնք զանազան խաղիք են խաղում մարդկանց գլխին։ Հաւանական է կարծել, որ նոքա գերմանական առասպեկների ու հեքիաթների մէջ մեծ գեր խաղող և գնոմներից պէս բաներ են, որոնք, ինչպէս յարտնի է, նոյնպէս ապրում են լեռներում։ Բաղոջները կամ պատի - բողջները նմանում են Ռուսաց ըրուկաց կոչուած արարածին կամ Հրէշին։ Կախիջւանցիք փոխաբերական մոքով պատի - բողջն կոչում են այն մարդկանց, որոնք չեն սիրում մարդամէջ խառնուել։

Դոցա, այդ արարածներին տեսնողներ են եղել, նոցա վորձանքներին ենթարկողներ են եղել։ Պատմում են, որ մէկ անգամ « Ջերքեղին Յարութինը գնացել է եալին ¹⁾ և բանիլ է « Ալբաստին », այսինքն ծովի-մար, ու ուզեցիլ է մազերը կարիլ և Աման, ասիլ է Ալբաստին, մի կտրիլ մազերս, կ'լուստանամ մինչեւ օխոր պորտիդ հոն չերենալ, վլտեղ քու նշանդ ըլլայ։ Յարութինը Ալբաստիին էրդում անիլ տուիլ է ու անպէս ապուլ տուիլ է, չէնէ էկէր մազերը կտրէր նը, Ալբաստին նարա դուռը եսիր պիտ ըլլայ։

Գիւղացի պառաւներից մէկը պատմում է. « իմիս մեծաս դախէկ էր, նա շատ դարբա մեզի կ'պատմէր իրեն կլուզը եկածը։ Մէկ գիշեր, կասէր նա, ըսկաթ ²⁾ պառկիլ իմ, քուն իմ Անկանիս տուսէն մէկ ձան կուգայ, քի « Իայեակ մա, դայեակ մա, շուտ ել, քեզի տղոցկանի պիտ տանինք »։ Այ այիմ-ըէկիմ ³⁾ կելիմ տեղէս դուս, կնայիմ, որ իմիս ճանցած մաշղիկո ինձի պիտ տանին իմիս գիտցած մաշղոց մէկին տունը։ Կելիմ այդ մաշղոց կեշտամ։ Քիչ կեշտամ, շատ կեշտամ, կ'հասնինք մէքամ տունի պէս բանի։ Նես կ'մուտնում ու բնչ տեսնում, կ'հայիմ, որ ադտեղ էղող մաշղոց կըրունկները ալապինը թեռս է, ու ես նոր կիմանամ ինչ օդինի էկածս —

¹⁾ Եալին=եղերք, ափ ²⁾ Էս ահաթ=հանգիստ, ³⁾ Ալիմ=ըէլլիմ=մէկէն, իրեն հաշիւ չ'տուած։

մեծիմէն աղէկներուն մէջը լղածս: Ել ինչ ալ լանը: Դաքա ինձի պատիւ: կուտան, ես ալ տղոցկանի տղան կառնում ու վերջը կերակուրի կ'նստինը: Տրապեզին¹⁾ վրան չէշիտ-չէշիտ²⁾ կերակուրներ կ'դնին ու վիրա³⁾ զօռ կանին ինձի ուտելու: Ես ալ առ կառնում, կ'նայիմ թեզաքը⁴⁾ կտոր, ան կառնում — կէնէ աղպէս: Սուտ ուտողս կ'լամ, համա ինչ քաշածս ալ ինքս դիտիմ, մէալ վէրի Տէրս գիտէ: Կերակուրէն ետքը դաքա ինձի տուն կ'ճամբին ու իմիս աշխատանքս կուտան, փէշս մէկ թօսի սոխի կնեպ ուկելով, ու ինձի մինչանքը մեր տունին մօտիկները ճամբելէն ետքը, իրենք կ'դառնան: Դաքա հեռացածներովը, ես ալ ալզը⁵⁾ սոխի կպեճները կ'վօթիմ ու երեսս խաչ հանելէն կ'վազիմ դէպի տունս Արախտան⁶⁾ կելլիմ տեղէս, կնալիմ, որ փեշտմալիս կազի արալընը⁷⁾ էրկու հատ սոկի կեցիլ է: Նոր խելքի կիննիմ, որ նացա տուածը ալալնալ սոկի էղիլ է, համա իմ աչքիս սոխի կնեպ ցուցուցիլ ին: Կը վազիմ, թարլած տեղս կ'նայիմ, բնչ կճեպ, բնչ բարի կճեպ: Ան սահաթը նաքա էկիլի են էտուէս ու առիլ ինչ: Փորքշէրան ՚ֆերօնը պատմում է իրեն պատահած հետևեալ անցքը. «Իրի-կուն էր. աշտին⁸⁾ մութը գետինը կոխիլ էր. հաւան խաթի չամուռ⁹⁾ էր: Կուշովիայէն¹⁰⁾ դուս էլլայ, պիտի էշտամ մէկ ուրիշ խութուռ: Թալալ¹¹⁾ հեռանալէս էտու, մէմալ կնալիմ իմիս բարեկամներէս մէկը՝ Փեօթր Վասիլեվիչը էկիլ է, նստիլ է գոռոկի էտուը ու կասէ ինձի. «Հայտա, բարեկամ, էշտանք իմիս տունս: Ես արմնցած կ'հացունում դարա. Գուկուդ տունդ հօս է բնչ, զերէ ես զիտէի նարա վտիխի մաշդ լղածը: Հապա բնչ է, կասէ դա, նոր գնիլ եմ ու, չիտիս ինչ: Է՛ էշտանքը էշտանք կասիմ ու կ'քշիմ ձիերուն. ամա իտա մաշդը նստելէն էտու ձիերը տառհալթ¹²⁾ կ'քաշին տուոկիր:

¹⁾ Տրապեզ=սեղան: ²⁾ Զէշիտ-չէշիտ=զանազան: ³⁾ Վիրա=միշտ, անդադար: ⁴⁾ Թեզաք=քակոր: ⁵⁾ Ըլոր կամ աղլու=այն: ⁶⁾ Արախտան=առաւոտեան: ⁷⁾ Արալըն=ճեղք: ⁸⁾ Աշտիս=արդէն: ⁹⁾ Խաթի չամուռ=սաստիկ ցեխս: ¹⁰⁾ Կուշովիս=գիւղի անուն (Կյացօք): ¹¹⁾ Թալալ=շատ: ¹²⁾ Տառհալթ=հազիւ հազ:

Քնացինք հասանք մէքամ Պալապան¹⁾ տունի. կնալիմ մէջնալ իլինք չէշտ-չէշիտ մաշդիկ, որը կելէ, որը կ'մռւտնու: Զիերս առին—տարին, ինձի ալ առին—մոցուցին նես, գու-իսր-շիյով²⁾ հալաւս հանելու տուին, մէքամ կինամաշդու էրկան շապեկ հագուցին ու պաշարեցին³⁾ չալելու⁴⁾ ու խաղց-նելու. ճոմպով տալու⁵⁾ տուին, չաթալխարալ կախեցուցին⁶⁾ ու աղպէս չէշտ-չէշիտ օյիններ բերին կլօխս ու իրանք ալ խըն-դալէն ջարդուցան: Անկից էտև հանեցին դուս, համա աշտխ անպէս բոզնիլ իմ, որ ճորով-մորով կ'քաշիմ: Աղպէս հանեցին մէքամ եառի⁷⁾ վրայ ու յոտէն կտեցին-ձգեցին մէքամ փոսի մէջ. շինընի⁸⁾ ասքով կեշտամ, անքով կեշտամ էլելու հնարը չիքայ, ու աղպէս սախ գիշերը կ'չարչիուիմ:

Սարախտան ըլլալէն էտև, նոր խելքս կլօխս կ'ժողվիմ, կ'նալիմ, որ մէքամ քուզնիլ⁹⁾ մէջ իմ: Ադ քուզնիին տէրը է-կաւ, բացից դուռը ու ինձի բանին օրսպիսութինը ասաց: Եղիլ է ալզը եառին թեփէն¹⁰⁾ էլլածս, քուզնիին թեփէն էղիլ է, վտեխիէն ես ընկիլ եմ մէջը: Քուզնիէն ալ քիչ մը հեռու կեշ-տամ, ձիերուս կ'զտնում: Քրտինք-ջուր կտրած: Հայիաննե-րուն անխոտակ վազցուցիլ ին, որ նեֆիսները կոխելու չին լալ-ուշափիան կտրած կայնիլ ին: Աս հալեքէթներէն¹¹⁾ էտև կիմանամ կլօխս ինչ էկածը մեծմէնաղէկներուն մեռքէն, ու կելլիմ տուն կուզամ»:

Պատոմում են, որ առայիժ-թառայիմը նոր-տարու գիշերը յայտնուել է չաջի Ստեփաննենց տանը. նա մտել է ծխնալորդից և դուրս է եկել վառարանի բերանից: Ալդ հանդամանքը, որի մանրամասն պատմութիւնը իսկոյն տարածուել է քաղու-քում, այնպիսի սարսափ է ձգել բոլորի վերայ. որ այնուհետև ամենքը, նամանաւանդ մանուկները ահօք-դողով են անցնե-

¹⁾ Պալապան—մեծ: ²⁾ Ջու-իսրշիմով=ստիպելով: ³⁾ Պաշտամ=սկսել: ⁴⁾ Չալել=նուագել: ⁵⁾ Ճոմպով տալ=գլխակոննձի տալ: ⁶⁾ Կաթալախայայ կայնեցունել=պիսի վերայ կանգնեցնել: ⁷⁾ Եառ=բլուր: ⁸⁾ Շինընի=այժմ: ⁹⁾ Քուզնի=դարբնոց: ¹⁰⁾ Թուփէ=գագաթ: ¹¹⁾ Հալեքէթ=աղմուկ:

լուս եղել Հաջի-Աստվիաննեց տան մօռովի Մինչև անդամ նոյն խոկ արդ տան մէջ ապրողներից են սկսել վախենալ երեխաները և սովորութիւն են արել Առամ-Թառալիմ լորջորջում տալու նոցա: Առամ-Թառալիմը եղել է ահարիու դէմքով, երկար ու սպիտակ մազերով ու մորուքով և երկաթէ երկար եղունգներով:

Պատմում են նոյնպէս, որ մէկ անդամ Պալին Մելքոնը գնացել է Թոփտիից Չալթը իւր ծերունի ազգականների տունը և ձեռք պագնելու ու նոցա օրհնութիւնը ստանալու, որովհետև նշանուած է եղել և պատրաստուամ է եղել կարգուելու: Վերաբարձին, երբ նա հասել է երկու զիւղի մէջ գտնուած «զեօլ» կոչուած տեղը, նորա լեռնեցից ընկել է ժիվուտը, «կոպչակի»—անուի ձև ընդունելով և շատ արագ գլորուելով: Հասնելով նորան, նա նստել է նորա վերայ, ճնշել է իւր ծանրութեան տակ և ամբողջ զիշերը չարչարել ու ման է ածել նորան, այնպէս որ խեղճը հազիւ հաղ կարողացել է միւս առաւտառ լեղապատառ եղած տուն վերաբառնալ: